

«Արևելքից» անցնելով «Հայրենիք», նա այստեղ երկար կանգ առաւ և այդ լրագրի ամբողջ ուղղութեան ոգի ու շունչ տուողն եղաւ: Արմիրարը նաև բելլէտրիստ էր և ունէր դիւրաշարժ, աշխոյժ գրել: Յայտնի է նորա գեղեցիկ վէպը «Կարմիր ժամուց», տպագրուած «Բանքեր»-ի 1903 թ. Ա. գրքում: Երկար տարիներ վարեց նաև Թուրքիոյ հայոց ազգ. երես. ժողովի անդամութեան պաշտօնը: «Մշակ»-ում նա աշխատակցում էր Հայկակ, Հրազդան և այլ անուններով:

Սպանութեան շարժառիթները առ այժմ անյայտ են:

Ա. Մ.

Մ Ա Ն Ր Լ ՈՒՐ ԵՐ

— Փոխարքան թոյլատրել է ներկայացնելու հայ բեմերի վրայ երկու նոր պիէս՝ «Մագթաղինէ» Աբէլեանի և «Ոչ ոք չունիմ» Գ. Բաշինջաղեանի:

— Լէօն արդէն վերջացրել է «Հայոց նոր պատմութիւնը սկսած ժԶ-դ.» աշխատութեան Ա. հատորը:

— Վրաց դրամատիկական ընկերութիւնը պատրաստութիւններ է տեսնում այս փեսարուարին տօնելու վրաց բեմի արժանատի մշակ և վրաց հասարակութեան սիրելի գործիչ Կ. Գ. Կիպիանու 35 ամեայ բեմական և դրականական գործունէութիւնը:

— Բուլղարիայի թերթերը հաղորդում են, որ դեկտ. 31-ին Սօֆիայում, Լոնդոն հիւրանոցում մեռել է Օսկար Իսկենդէր անունով մի հայ, որ Պօլսից անցնելով Բուլղարիա գործել է քաղաքական—հասարակական առպարէղում: Օսկարը աւարտել էր Իտալական համալսարան, ունէր փիլիսոփայութեան քոլոնիալ տորի տիտղոս և երկար տարիներ լամբարդել է Ֆրանսերէն լեզուով «Լա Բալդարի», «Լէքօ դէ Բալքան», «Լէ Կուրիէ դէ Բալքան» և «Լէ Մէսաֆէր դէ Բալքան» թերթերը: Նա եղել է միևնոյն ժամանակ և թղթակից եւրոպական քաղաքական թերթերի. զետէր մօտէն Ֆրանսերէն, իտալերէն, հայերէն, թուրքերէն և բուլղարերէն:

«Բուլղարիոյ մամուլը, առանց բացառութեան, մեծ գնահատութեամբ և սքանչացումով է խօսում այս հայ քաղա-

քաղէտ—հրապարակախօսի վրայօք, որ սակայն մեռած է յետին
չքառորութեան և թշուառութեան մէջ:

— Թիֆլիսում պ. Առաքելեանցին իրաւունք է տրուած
ամենօրեայ հայերէն մի թերթ հրատարակելու «Զանգակ»
անունով:

— Կիլիկիոյ կաթողիկոս Սահակ Խապայեանի իւր կաթողի-
կոսական վիճակի բարւոքման համար դորժ դրած ջանքերը
յայտնի են: Նա աչքից չէ թողել նաեւ իւր վիճակի նիւթական
կացութիւնը, որ ճիշտ կերպով պատկերացւում է տարէցտարի
«Կիլիկիոյ կաթողիկոսական Աթոռին հաշուեցոյց» ներքով: Վերջի
հաշուեցոյցը 1904 թուականինն է, որից Կիլիկիոյ Աթոռի ել և
մուտը պատկերանում է այսպէս՝ ընդհանուր ամենատեսակ
մուտք 193205,20 դրուշ և ընդհանուր ելք 154656,20 դրուշ,
որով առ 1 յուն. 1905 թ. յաւելեալ դումար է անցնում
38549 դրուշ: Թէ՛ մուտքի և թէ՛ ելքի մէջ պրակ առ պրակ
նշանակուած են աղբիւրներն ու ծախքի տեղը մանրամաս-
նօրէն:

— Թիֆլիսի հայոց բարեգործ. ընկ. նուիրել է պ. Ա. Ա.
Անանեանը 20,000 ռուբլի զանազան կղթական նպատակներ
համար:

— Թաւրիզում նորընտիր առաջնորդի նախաձեռնութեամբ
կազմուած մի ժողովում որոշուած է Թաւրիզում հրատարակել
հայերէն մի շաբաթաթերթ:

— Շատ քաղաքներից դիմումներ են լինում Թիֆլիսի
Հայ. բարեգործ. ընկերութեան ճիւղեր բանալու համար: Միև-
նոյն ժամանակ ձայներ կան, որ հայկական գոյութիւն ունեցող
շատ մանր հանրօգուտ ընկերութիւններ ուզում են միանալ
մի ընդհանուր կապով յիշեալ ընկերութեան հետ:

— Թիֆլիսում Հայ ուսուցչական Միութիւնը այս տարի
մտադիր է հրատարակելու մի մանկավարժական ամսագիր «Նոր
դպրոց» անունով:

— Լրագրերի հաղորդելով անցեալ յունուարի 25-ին Լօն-
դոնում տեղի է ունեցել անգլո-հայկական տարեկան երեկոյթը:
Երեկոյթին մեծ հետաքրքրութիւն է շարժել երգչուհի օր. Ա.
Բասեան, որ անգլ. օպերային խմբի պրիմադօննա է: Երեկոյթին
մասնակցել են նաեւ օր. Վարդուհի Յակովբեան, որ Ղորղանեանի
երաժշտական մի կտորն է նուագել դաշնամուրի վերայ, և օր.
Զապէլ Տինճեան, որ շատ սիրուն արտասանել է Բաֆֆու «Զայն
տուր ով ծովակը» անգլերէն:

Օրիորդ Ջապէլը նկարչուհի և վիպագիր է. նա կարգացել է նաև անգլիերէն մի ուսումնասիրութիւն Հայրիկի մասին:

— Փետրուարի 1-ին Լայպցիգում Ադամեան քոյրերը կազմել են մի նուագահանդես: Օր. Հեղինէ և Նւզինէ քոյրերը յայտնի ուսուցչապետ Մարտին Կրաուզէի աշակերտուհիներն են. նոքա դաշնամուրի վրայ նուագել են յաջողութեամբ կտորներ Բախից, Բէրգէրից, Լիստից և Արէնսիուց: Օրիորդների ունեցած ձեռքը հանդիսականները արտայայտել են ծափահարութիւններով:

— Թիֆլիսում նորերս վախճանուած Սարգիս Քոչարեանցը Ներսիսեան դպրանոցին թողել է 15,000 ռուբլու արժողութեամբ մի տուն:

— Արմաշու դպրեմանքում այժմ 33 ուսանող կայ, որոնցից 9 տարեկաւորութեան աստիճան ունին, իսկ մնացած 24 հոգին դպրութեան չորս աստիճան:

— Առաջիկայ ապրիլ ամսում Թիֆլիսի Վանուց Մայր եկեղեցու բակում թաղուած յայտնի ազգային գործիչ Աբգար Յովհաննիսեանի գերեզմանի վրայ դրուելու է բիւստ—կիսարձան, որի ծախքերը այդ առթիւ կազմուած յանձնախումբը հոգացել է նուիրաբերութեամբ:

— Գանձակում բացուած է «Հանրակրթական կուրսեր» և ամսոյս 11-ին կարգացել է առաջին դասախօսութիւնը 200 ունկնդիրների առաջ Միխայիլովը՝ «արձագանք և ներդաշնակութիւն» ֆիզիքայի վերաբերեալ նիւթի մասին:

— Փետրուարի 14-ին Թիֆլիսում, Արախտական ընկերութեան կոնցէրտի դահլիճում տեղի ունեցած երեկոյթ-պարահանդէսում հասարակութեան հիացմունք է պատճառել իւր նուրը և ճաշակաւոր նուագաւորութեամբ տրապիզոնի, եւրոպական երաժշտական կրթութիւն ստացած ջութակահար պ. Դաւիթ Դաւթեանը, որի նուագած մի քանի կտորները (ի միջի այլոց նաև «Կռունկ»-ը) կրկնուել են բիսէրով: Պ. Դաւթեանը Խոստանում է մեծ ապագայ:

— Թիֆլիսում մտադրութիւն կայ հիմնել Ժուրնալիստների միութիւն. այդ առթիւ այժմ լինում են ժողովներ:

— Թիֆլիսում տիկ. Աստղիկ Մարիկ իրաւունք է ստացել հրատարակել մի երգիծաբանական հանդէս «Ձուռնա» անունով: